ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ԱՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-20/03»

ք. Արարատ_ «11» 08 2020թ.

«Արարատի քաղաքային համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Հայկ Հայկյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Բիդեք» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գ. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Արարատի քաղաքային զբոսայգու վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **30-ը հոկտեմբերի 2020թ**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն --20--- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __3____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ***60.000.353 (վաթսուն միլիոն երեք հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ, որից 10.000.059 (տաս միլիոն հիսունինը) ՀՀ դրամը*** ՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի

կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Արարատի քաղաքային համայնքապետարան	«Բիդեք» ՍՊԸ
ք,Արարատ Շահումյան 34	ք. Երևան, Սասունցի Դավթի փող., 87ա շենք
Ֆին.նախ. գործառնական վարչ.	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900422101171	Հ/Հ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ 04000436	ՀՎՀՀ 00450801
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան	Տնօրեն՝ Գ. Ավետիսյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«11» 08 2020թ.

Հավելված թիվ 1
կնքված ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

հ/հ	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Ծավալը	Միավորի արժեք /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ/Այգի				
1	Ե/բետոնե հավաքովի սալերի քանդում հ-10սմ./1046.24մ2/	մ3	104.62	6 000	627 720
2	Բետոնե գեղարվեստական սալերից հատակի քանդում	մ2	663.3	500	331 650
3	Բազալտե սալերով հատակի երեսապատի քանդում	մ2	240	500	120 000
4	Ճեմուղիների բետոնե ծածկույթի քանդում 10սմ հաստ./250մ2/	մ3	25	15 000	375 000
5	Բազալտե եզրաքարերի քանդում	գմ	498	850	423 300
6	Բետոնե եզրաքարերի քանդում	գմ	1538.7	850	1 307 895
	Ընդամենը				**3 185 565**
	Ընդամենը 7.15%				**7.01**
	Հուշարձան				
7	Բետոնե գեղարվեստական սալերից հատակի քանդում	մ2	38	500	19 000
8	Բազալտե սալերով հատակի երեսապատի քանդում	մ2	580	500	290 000
8	Բազալտե աստիճանների քանդում պահպանելով հետագա օգտագործման համար	գմ	33.6	1 000	33 600
	Ընդամենը				**342 600**
	Ընդամենը 0.71%				**0.75**
	Հասարակական սանհանգույց				
9	Կերամիկական սալիկներից հատակի քանդում	մ2	67.7	400	27 080
10	Պատերից գաջի սվաղի քանդում	մ2	127	900	114 300
11	Պատերից ց/ավազե սվաղի քանդում	մ2	84.2	200	16 840
12	Կանոնավոր ձևի տուֆ քարից շարի քանդում	մ3	10.5	12 000	126 000
13	Արտաքին պատերի ց/ավազե սվաղի քանդում	մ2	84	300	25 200
	Ընդամենը				**309 420**
	Ընդամենը 0.71%				**0.68**
	Նստարաններ				
14	Բետոնե սալիկներով երեսապատի քանդում	մ2	32	500	16 000
15	Ցեմենտ ավազե սվաղի քանդում	մ2	255	200	51 000

					67 000
	Ընդամենը 0.15%				**0.15**
	Ջրավազաններ				
16	Բազալտե երեսապատի քանդում	մ2	110.7	500	55 350
17	Ցեմենտ ավազե հարթաշերտի քանդում	մ2	117	400	46 800
18	d=50մմ մետաղական խողովակների ապամոնտաժում	գմ	120	500	60 000
19	Շին աղբի հավաքում, բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	680.24	2 355	1 601 965
	Ընդամենը				**1 764 115**
	Ընդամենը 4.15%				**3.88**
	Շին. վերանորոգման աշխատանքներ				
	Հասարակական սանհանգույց				
1	50մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ2	61	2 500	152 500
2	Մամլոգրանիտե 300x300մմ սալերից հատակի պատրաստում	մ2	61	10 000	610 000
3	Պատերի ցեմենտ ավազե սվաղ լավորակ	մ2	172.76	1 700	293 692
4	Պատերի երեսպատում հախճասալով	մ2	93.6	8 000	748 800
5	Պատերի ներկում լվացվող լատեքսային ներկով, համատարած մածկապատմամբ, լավորակ	մ2	79.16	1 400	110 824
6	Առաստաղի քսահարթեցում գիպսոնիտով	մ2	61	1 000	61 000
7	Առաստաղի ներկում լվացվող լատեքսային ներկով համատարած մածկապատմամբ, լավորակ	մ2	61	1 500	91 500
8	Ալյումինե բլոկով, սպիտակ 46մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում	մ2	8.32	45 000	374 400
9	Ալյումինե բլոկով, սպիտակ 46մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում	մ2	1.44	40 000	57 600
10	Ալյումինե բլոկով, սպիտակ 60մմ հաստ.ջերմակամուրջով ապակեփաթեթով 4+4 արտաքին դռների տեղադրում	մ2	5.88	60 000	352 800
11	Ալյումինե պրոֆիլով միջնորմներ ամրացման դետալներով	մ2	16	17 000	272 000
12	Արտաքին պատի սվաղ ցեմենտավազային շաղախով՝ ցանցով	մ2	94.5	3 000	283 500
13	Արտաքին պատի ներկում ճակատային ներկով	մ2	94.5	1 100	103 950
14	Արտաքին պատերի մաքրում ավազաշիթով	մ2	41.1	200	8 220
	Ընդամենը				**3 520 786**
	Ընդամենը 7.18%				**7.75**

	Հուշարձան				
15	50մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ2	39.2	2 500	98 000
16	50մմ հաստ.բազալտե սալերով հարթակի պատրաստում	մ2	39.3	17 000	668 100
17	Խճի շերտի պատրաստում 8սմ հաստությամբ /583.5մ2/	մ3	46.68	8 500	396 780
18	Բետոնե շերտի պատրաստում B12.5 դասի բետոնից 8սմ հաստ. /583.5մ2/	մ3	46.68	38 000	1 773 840
19	30մմ հաստ.բազալտե սալերով հարթակի պատրաստում	մ2	583.5	12 390	7 229 565
20	80x200մմ բետոնե եզրաքար տեղադրում բետոնե հիմքի վրա	գմ	317	4 500	1 426 500
21	Բազալտե աստիճանների տեղադրում պահպանվածը	գմ	33.6	2 800	94 080
	Ընդամենը				11 686 865
	Ընդամենը 26.5%				25.71
	Նստարաններ				
22	Պատերիի սվաղ ցեմենտավազային շաղախով՝ ցանցով	մ2	120	3 000	360 000
23	20մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ /հարթակ/	մ3	58	1 700	98 600
24	30մմ հաստ.բազալտե սալերով հարթակի պատրաստում	մ4	70.2	11 630	816 426
25	Նստարանի մետաղական մասերի տեղադրում 60x40x3մմ մետաղական խողովակներից	տն	0.285	550 000	156 750
26	Փայտյա մասերի տեղադրում	մ3	2.8	200 000	560 000
27	Փայտյա մասերի լաքապատում 2 անգամ	մ2	196	800	156 800
	Ընդամենը				2 148 576
	Ընդամենը 4.78%				4.73
	Ջրավազաններ				
28	Պատերի երեսապատում 30մմ հաստ.բազալտե սալերով	մ2	109.6	18 000	1 972 800
29	30մմ հաստ.բազալտե սալերից գլխաթասերի տեղադրում	մ2	36.5	13 000	474 500
30	50մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ հատակի	մ2	200	2 500	500 000
31	Ջրամեկուսացում 2 շերտ իզոգամով	մ2	200	5 000	1 000 000
32	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ2	279.1	1 900	530 290
	Ընդամենը				4 477 590
	Ընդամենը 10.26%				9.85
	Պոմպակայան				
33	Միաձույլ ե/բ ծածկի սալի պատրաստում B25 դասի բետոնից	մ3	1.45	75 000	108 750
34	Φ16A500c ամրանի արժեքը	տն	0.18607	360 000	66 985
35	Մետաղական դռան տեղադրում	տն	0.059	80 000	4 720
36	L50x50x5մմ անկյունակի արժեքը	տն	0.03104	425 000	13 192
37	60x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	տն	0.00416	425 000	1 768

38	Պողպատե թիթեղ b=3մմ արժեքը	տն	0.02332	550 000	12 826
39	Ծխնիի արժեքը	հատ	2	600	1 200
40	Փական,բռնակ	հատ	1	3 000	3 000
41	Մետաղական մասերի յուղաներկում 2 անգամ	մ2	3.9	1 100	4 290
	Ընդամենը				**216 731**
	Ընդամենը 0.47%				**0.48**
	Մետաղական ցանկապատ				
42	Բետոնե կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-12.5 դասի բետոնից հենասյուների համար	մ3	6.52	40 000	260 800
43	Մետաղական անկյունակե շրջանակով ,մետաղական խողովակներից ցանկապատի պատրաստում և տեղադրում	տն	6.085	50 000	304 250
44	50x50x3մմ մետաղական խողովակի արժեքը	տն	2.52813	425 000	1 074 455
45	40x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	տն	1.63978	425 000	696 907
46	L 25x3 մմ մետաղական անկյունակի արժեքը	տն	1.91688	425 000	814 674
47	Մետաղական ցանկապատի յուղաներկում 2 անգամ	տն	0.34224	35 000	11 978
	Ընդամենը				**3 163 064**
	Ընդամենը 6.71%				**6.96**
	Ջրամատակարարման ցանց				
1	Φ32x3մմ պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	11	2 200	24 200
2	Φ25x2.5մմ պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	25	2 200	55 000
3	Φ20x1.9մմպոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	10	2 200	22 000
4	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր 20-32մմ	հատ	25	80	2 000
5	Ի25մմ փականի տեղադրում	հատ	1	5 000	5 000
6	Ի20մմ փականի տեղադրում	հատ	4	4 500	18 000
7	Ի15մմ փականի տեղադրում	հատ	16	4 000	64 000
8	Լվացարանի ծորակ	հատ	7	6 000	42 000
9	Ճկուն խողովակ զուգարանակոնքի լվացման տակառիկների և լվացարանների համար Φ15, L=0.5մ	հատ	13	1 500	19 500

10	Պենոպոլիստիրոլե ջերմամեկուսիչ ներքին տրամագիծը՝ Dներք= 3.2սմ ,պատի հաստությունը՝ 1.9 սմ	մ	26	250	6 500
11	Անցքի բացում պատերում	մ3	0.1	30 000	3 000
12	Կենտրոնախույս պոմպ ճնշման կարգավորիչովH=20 մ, Q=0.5 լ/վրկ	հատ	1	300 000	300 000
13	Պողպատե կարճախողովակ երկկողմանի պարուրակով DN25,L=0.2մ,3հատ	հատ	3	500	1 500
14	Գնդային Փական DN25	հատ	2	5 000	10 000
15	Հակադարձ Փական DN26	հատ	1	6 000	6 000
	Ընդամենը				**578 700**
	Ընդամենը 1.24%				**1.27**
	Կոյուղու ցանց				
1	Պոլիվինիքլորիդե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով d=110մմ,/հիդրավլիկ փորձարկումով	զմ	12	1 800	21 600
2	Պոլիվինիքլորիդե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով d=50մմ /հիդրավլիկ փորձարկումով/	զմ	25	1 300	32 500
3	Հատակադիր զուգարանակոնք	կ-տ	6	29 000	174 000
4	Հոսակների տեղադրում Φ50մմ	հատ	4	3 000	12 000
5	Խեցե լվացարանների տեղադրում սիֆոնով	կ-տ	7	22 000	154 000
6	Միզման (երկար մինչև հատակ),	հատ	3	18 000	54 000
7	Ուղիղ եռաբաշխիչ de110x110,	հատ	6	2 000	12 000
8	Ուղիղ եռաբաշխիչ de50x50,	հատ	6	1 500	9 000
9	Թեք եռաբաշխիչ de110x50,	հատ	2	2 000	4 000
10	Թեք եռաբաշխիչ de50x50,	հատ	2	1 500	3 000
11	Անցում de110x50,	հատ	2	1 200	2 400
12	Անկյունակ de50 α=900	հատ	6	1 000	6 000
13	Անկյունակ de50 α=450	հատ	6	1 000	6 000
14	Անցքի բացում պատերում	մ3	0.1	30 000	3 000
	Ընդամենը				**493 500**
	Ընդամենը 1.05%				**1.09**
	Կոյուղու հոր				
1	Միաձույլ ե/բետոնե կոյուղու հորի հատակի և պատերի պատրաստում B25 W6 դասի բետոնից	մ3	12	120 000	1 440 000
2	Ամրանի արժեքը	տն	0.623	360 000	224 280
3	Միաձույլ ե/բետոնե կոյուղու հորի ծածկի սալի պատրաստում B25 W6 դասի բետոնից	մ3	2.1	100 000	210 000
4	Ամրանի արժեքը	տն	0.295	360 000	106 200
5	Ներդիր էլեմենտների տեղադրում	տն	0.034	750 000	25 500
6	Կոյուղու հորի հավաքովի ե/բետոնե կոնստրուկցիաների տեղադրում	մ3	0.27	30 000	8 100
7	ԿԷ 7-9 պատի օղակի արժեքը	հատ	1	35 000	35 000
8	ԿԷ 7-3 պատի օղակի արժեքը	հատ	2	22 000	44 000
9	ԿԷՕ-1 հենարանային օղակի արժեքը	հատ	1	28 000	28 000

10	Մետաղական պատյան խողովակի տեղադրում d=150մմ	գմ	1	9 000	9 000
11	Թուջե մտոցի արժեքը	հատ	1	75 000	75 000
	Ընդամենը				**2 205 080**
	Ընդամենը 4.8%				**4.85**
	Ոռոգման ցանց				
1	Dy32x2.5 մմ խողովակաշարի անցկացում պողպատե էլ. եռակցվող խողովակներից /հիդրավլիկ փորձարկումով/	գմ	200	1 800	360 000
2	Dy32x2.5 մմ խողովակաշարի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացումով	գմ	200	500	100 000
3	Dy25x2.5 մմ խողովակաշարի անցկացում պողպատե էլ. եռակցվող խողովակներից /հիդրավլիկ փորձարկումով/	գմ	340	1 300	442 000
4	Dy25x2.5 մմ խողովակաշարի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացումով	գմ	340	400	136 000
5	Ջրթող հանգույցների տեղադրում D25մմ	հատ	6	6 000	36 000
6	Խողովակառստ (штуцер) D=25մմ, L=25սմ	հատ	6	1 000	6 000
7	Փական, Dy25 PN = 1.0 ՄՊա	հատ	7	5 000	35 000
8	Ռետինե փողրակ d=25մմ,L=10.0մ. 2-հատ	գմ	20	300	6 000
9	Dy32մմ պողպատե արմունկներ	հատ	3	500	1 500
10	Dy25մմ պողպատե արմունկներ	հատ	6	400	2 400
11	Պողպատե պատյանի ներկում յուղաներկով կրկնակի անգամ	մ2	2	1 100	2 200
12	Պոլիմերա-ավազային փականային հոր ծածկի սալով	հատ	1	70 000	70 000
13	Dy65xDy32 պողպատե խողովակների միացում	տեղ	1	3 000	3 000
14	Dy32xDy25 պողպատե խողովակների միացում	տեղ	3	2 500	7 500
15	Dy25xDy25 պողպատե խողովակների միացում	տեղ	3	2 500	7 500
16	3-րդ կարգի բնահողի մշակում եռքով կողլիցք	մ3	50	3 000	150 000
17	4-րդ կարգի բնահողի մշակում եռքով կողլիցք	մ3	19	4 000	76 000
18	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 7կմ /5մ3/	տն	9.5	2 400	22 800
19	Հետլիցք տեղի բնահողով ձեռքով,տոփաումով	մ3	64	1 000	64 000
	Ընդամենը				**1 527 900**
	Ընդամենը 3.21%				**3.36**

	Լուսավորություն				
1	Էլեկտրական բաշխիչ վահան 12 մոդուլ	հատ	1	15 000	15 000
2	Մետաղյա Բաշխիչ վահան 800x500x200մմ 48 մոդուլ արտաքին	հատ	1	90 000	90 000
3	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 16Ա	հատ	1	3 000	3 000
4	30մԱ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԱՆՋԱՏՄԱՆ ՍԱՐՔ. 1 բևեռ 10Ա	հատ	1	35 000	35 000
5	30մԱ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԱՆՋԱՏՄԱՆ ՍԱՐՔ. 1 բևեռ 16Ա	հատ	2	40 000	80 000
6	30մԱ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԱՆՋԱՏՄԱՆ ՍԱՐՔ. 3 բևեռ 6Ա	հատ	2	20 000	40 000
7	Ավտոմատ անջատիչ 3 բևեռ 16Ա	հատ	1	7 000	7 000
8	Ավտոմատ անջատիչ 3 բևեռ 20Ա	հատ	1	7 000	7 000
9	Ավտոմատ անջատիչ 3 բևեռ 25Ա	հատ	1	8 000	8 000
10	Ավտոմատ անջատիչ 3 բևեռ 32Ա	հատ	1	9 000	9 000
11	Կոնտակտոր 16Ա 1Բևեռ	հատ	12	10 000	120 000
12	Ժամանակային ռելե 16Ա 1Բևեռ	հատ	1	18 000	18 000
13	Մեկուսիչ ժապավեն	հատ	20	300	6 000
14	20մմ PVC խողովակ	մ	1000	350	350 000
15	20մմ PVC ճկախողովակ	մ	600	400	240 000
16	32մմ PVC խողովակ	մ	700	550	385 000
17	80x80x75 մմ ՊՎՔ խողովակի միացման տուփ	հատ	110	1 000	110 000
18	ՎՎԳ- 3x0.75մմ2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում հենապյուների միջով	գմ	350	350	122 500
19	ՎՎԳ- 3x1.5մմ2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում խողովակով խրամուղի	գմ	1600	450	720 000
20	ՎՎԳ- 3x2.5մմ2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում խողովակով խրամուղի	գմ	25	700	17 500
21	ՎՎԳ- 5x1.5մմ2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում խողովակով խրամուղի	գմ	700	800	560 000
22	ՎՎԳ- 5x4մմ2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում խողովակով խրամուղի	գմ	370	1 400	518 000
23	ՎՎԳ- 5x6մմ2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում ենթակայանի կոնստրուկցիայով	գմ	15	2 000	30 000
24	2.5-4մմ Հաղորդալարի միացման 3 տեղանոց ամրակ /կլեմնիկ/	հատ	350	2 000	700 000
25	2.5-4մմ Հաղորդալարի միացման 5 տեղանոց ամրակ /կլեմնիկ/	հատ	50	4 000	200 000
26	Վահանակ (1x2մոդուլ)	հատ	3	8 000	24 000
27	Միդիրքային վարդակ	հատ	2	1 700	3 400
28	Միդիրքային անջատիչ	հատ	1	1 600	1 600

29	360՝ Բաժանիչ տուփ սենսորային PIR անջատիչ	հատ	7	25 000	175 000
30	A1 Տիպի կետային լուսավորության սարք IP44 8Վտ	հատ	32	8 000	256 000
31	A2 Սյան լուսատու 15Վտ	հատ	105	18 000	1 890 000
32	A3 Լուսարձակ 10Վտ	հատ	7	25 000	175 000
33	A4 Լուսարձակ 20Վտ	հատ	2	30 000	60 000
34	E1 վթարային EXIT տիպի լուսատու 12Վտ	հատ	4	20 000	80 000
35	Հենասյուն H=2մ, Φ50մմ	հատ	105	15 000	1 575 000
36	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողլիցք	մ3	250	3 000	750 000
37	Հետլիցք ձեռքով տեղի բնահողով տոփանումով	մ3	250	1 000	250 000
38	Բետոնե հիմքերի պատրաստում պատրաստում B-12.5 դասի բետոնից հենասյուների համար	մ3	2.84	48 000	136 320
	Ընդամենը				9 767 320
	Ընդամենը 20.92%				21.49
	Ընդամենը ՀՀ դրամ				45 454 813
	Շահույթ				4 545 481
	Ընդամենը ՀՀ դրամ				50 000 294
	ԱԱՀ				10 000 059
	Ընդամենը ՀՀ դրամ				60 000 353

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Արարատ- հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի քաղաքային համայնքապետարան
ք,Արարատ Շահումյան 34
Ֆին.նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101171
ՀՎՀՀ 04000436
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան

Գ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բիդեք» ՍՊԸ
ք. Երևան, Սասունցի Դավթի փող., 87ա շենք
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ 00450801,
Տնօրեն՝ Գ. Ավետիսյան

Գ.Տ.

Հավելված թիվ 2
« 11 » 08 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՋՐՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Քանդման աշխատանքներ	Համաձայնագրի կնքման օրից	30/10/2020թ
2	Հուշարձանների տարածքի վերանորոգում	Համաձայնագրի կնքման օրից	30/10/2020թ
3	Հասարարակական սանհանգույցի վերանորոգում	Համաձայնագրի կնքման օրից	30/10/2020թ
4	Ջրավազանների վերանորոգում	Համաձայնագրի կնքման օրից	30/10/2020թ
5	Նստարանների տեղադրում	Համաձայնագրի կնքման օրից	30/10/2020թ
6	Կոյուղու ցանցի կառուցում	Համաձայնագրի կնքման օրից	30/10/2020թ
7	Ոռոգման ցանցի կառուցում	Համաձայնագրի կնքման օրից	30/10/2020թ
8	Մետաղական ցանկապատի կառուցում	Համաձայնագրի կնքման օրից	30/10/2020թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի քաղաքային համայնքապետարան
ք,Արարատ Շահումյան 34
Ֆին.նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101171
ՀՎՀՀ 04000436
Համայնքի ղեկավար՝ Հ. Ա. Հայկյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բիդեք» ՍՊԸ
ք. Երևան, Սասունցի Դավթի փող., 87ա շենք
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ 00450801
Տնօրեն՝ Գ. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը հաշվարկվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
«11» 08 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231270	Քաղաքային գրոսայգու վերանորոգման աշխատանքներ՝	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի քաղաքային համայնքապետարան
ք,Արարատ Շահումյան 34
Ֆին.նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101171
ՀՎՀՀ 04000436
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բիդեք» ՍՊԸ
ք. Երևան, Սասունցի Դավթի փող., 87ա շենք
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ 00450801
Տնօրեն՝ Գ. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.